ՎԻԼՀԵԼՄ ԲԱՌԻՄ

ՔՐԻՍՏՈՆՅԱՆԵՐԻ ՎԻՃԱԿԸ ԹՈՒՐՔԻԱՅՈՒՄ ԱՌԱՋԻՆ ԱՇԽԱՐՀԱՄԱՐՏԻ ԱՎԱՐՏԻՆ

(1917-1918)[1]

1916 եւ 1917 թթ. ընթացքում հայ փարագիրների մեծ մասը ոչնչացավ Իրաքի եւ Սիրիայի անապատներում: Գերմանիայի դեսպան կոմս Փաուլ ֆոն Վոլֆ-Մետերնիխը 1916 թ. հունիսի 10-ին ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին գրում է. «Հայերի հալածանքներն արեւելյան նահանգներում թեւակոխել են իրենց վերջին փուլը: Թուրքական կառավարությունն իր ծրագրի իրագործման հարցում չսխալվեց: Հայկական հարցը Թուրքիան լուծեց հայ ազգի բնաջնջման միջոցով՝ հաշվի չառնելով ո՛չ մեր պատկերացումները, ո՛չ Ամերիկայի դեսպանության եւ պապի պատվիրակության առաջարկները, ո՛չ Անտանտի պետությունների սպառնալիքները, իսկ առավել եւս Արեւմուտքի երկրների հասարակական կարծիքը: Նա այժմ պատրաստ է կազմալուծելու եւ ցրելու հայերի վերջին խլյակները, որոնք հաղթահարել էին առաջին բռնագաղթը»[2]:

Տեղահանվածներին քշում էին Ռաս-ուլ-Այն եւ Դեր էս-Զոր՝ Եփրատի ափ՝ այժմյան հյուսիսային Սիրիա: Մինչեւ 1915 թ. հոկտեմբերը 300.000 հայեր, մեծ մասը կանայք ու երեխաներ, Հալեպից քշվել էին մինչեւ հյուսիսային սիրիական անապատները: Վերապրողները մահանում էին համաճարակներից, քաղցից, ուժասպառությունից կամ սպանվում քրդերի ու թուրքերի ձեռքով: Նրանց տեղավորում էին կանոնավոր համակենտրոնացման ճամբարներում, որտեղ չկար բնակարան եւ սննդամթերք: Այստեղ նրանք մնում էին այնքան ժամանակ, քանի դեռ բան կար նրանցից պոկելու. այնուհետեւ նրանց քշում էին անապատ, Մոսուլի ուղղությամբ: 1916 թ. ապրիլին Դեր էս-Զորի թուրքական գլխավոր հրամանատար Ալի Սուադը հրաման ստացավ 10 տոկոսով կրճատել տեղ հասած հայ բնակչության թիվը[3]: Ի վերջո Ալի Սուադը որպես «չափազանց մեղմ անձ» հեռացվեց պաշտոնից, նրան փոխարինեց Սեկի բեյ անունով չերքեզ մի հրամանատար, որը չերքեզական ավազակախմբերի միջոցով պարբերաբար կոտորում էր քրիստոնյաներին: Քրիստոնյաների այլ խմբեր քշվում էին դեպի Կոնիայի ճահճուտներին կից գտնվող համակենտրոնացման ճամբարները: Մինչեւ 1916 թ. ամռան վերջը «դատարկվեցին» Եփրատի ափամերձ համակենտրոնացման ճամբարները: Իսկ աշխատանքային գումարտակներից ողջ մնացածները ստիպված խլամ էին ընդունում՝ իրենց կյանքը փրկելու համար: Ընդհանրապես, ըստ Լեփսիուսի, ինչպես նաեւ Հայոց պատրիարքարանի տվյալների, Օսմանյան կայսրությունում ապրող 1.845.450 հայերից (չհաշված «միաբաններին» ու բողոքականներին) մոտ 244.000-ը փախուստի դիմեց Կովկաս կամ Եգիպտոս: Տեղահանվեց մոտ 1,4 միլիոն հայ, որից ավելի քան մեկ միլիոնը զոհվեց: Լեփսիուսը իր գրքի երկրորդ հրատարակությունում 1915 թ. զոհերի թիվը հասցնում

1 Հատված «Di Turkey und christichen Minderheiten» («Թուրքիան եւ նրա քրիստոնյա փոքրամասնությունները» գրքից, Վիեննա, 2005):

2 www.armenocide.de (10.7.1916).

3 Տե՛ս Tessa Hofmann, Deutsche Quellen, Wien 1984, էջ 110:

է 1,1 միլիոնի[4]: Սվեն Հեդինը, որը 1917 թ. այցելել է Դեր Էս-Զոր, իր «Բաղդատ, Բաբելոն, Նինվե» (Լայպցիգ, 1918) գրքում սպանված հայերի համար տալիս է 500.000 թիվը, որը մինչ օրս էլ վկայակոչում է թուրքական քարոզչությունը[5]: «Բրիտանական հանրագիտարանում» ևս բերվում է այդ թիվը[6]:

Հայերից հետո հերթը եկավ հույներին: Ռուսների կողմից 1916 թ. ապրիլին Տրապիզոնի գրավումը առիթ հանդիսացավ՝ սկսելու հույների արտաքսումը Պոնտոսից: 1916 թ. դեկտեմբերին Ավստրիայի դեսպան Պալավիչինին տեղեկացրեց Սամսունի հույների տեղահանման մասին: 1916 թ. հոկտեմբերի 27-ին Լոնդոնում ստորագրվեց Սայքս-Փիքոթի համաձայնագիրը, որը նախատեսում էր սիրիական և արաբական տարածքների բաժանում Անգլիայի ու Ֆրանսիայի միջև: Ընդ որում, նախատեսվեց նաև Ֆրանսիայի կողմից հայ կամավորների զորակոչ: Դրանով իսկ Ֆրանսիան որոշակիորեն ստանում էր իրեն խոստացված Ադանայի նահանգը[7]: Մինչև 1916 թ. նոյեմբեր ամիսը Եգիպտոսում և ԱՄՆ-ում 5000 հայ հավաքագրվեց «Հայկական լեգեոնում», որը պաշտոնապես պիտի ենթարկվեր ֆրանսիական արևելյան լեգեոնին: Երբ 1920 թ. Ֆրանսիան համաձայնության եկավ քեմալականների հետ, կորցրեց հետաքրքրությունը լեգեոնի նկատմամբ: Առնոլդ Թոյնբիի «Կապույտ գրքի» և Յոհաննես Լեփսիուսի հրապարակումների շնորհիվ հայկական կոտորածների թեման շարունակում էր մնալ քննարկումների առարկա:

Հայերին Միջագետք աքսորելուց հետո թուրքերը փորձեցին վերացնել Կոստանդնուպոլսի և Սիսի պատրիարքարանները և իջեցնել նրանց կապը Էջմիածնի կաթողիկոսի հետ: Կոստանդնուպոլի պատրիարքին տեղափոխեցին Երուսաղեմ: Տեղի գերմանացի հյուպատոս Բրոդեն 1916 թ. նոյեմբերին այդ մասին հաղորդեց ռայխսկանցլեր Բեթման Հոլվեգին իր մանրամասն զեկույցով, որի մեջ տալիս է ամբողջ նախապատմությունը. «Հայոց պատրիարքարանի մասին նոր կարգադրությունը, որ արվել է այս տարվա օգոստոսի 29-ին, տեղի հայկական շրջանակների համար լրիվ անակնկալ էր և այդ պատճառով մտահոգիչ է, քանի որ թուրքական կառավարությունը կամայականորեն շրջանցում է 1860 թ. մայիսի 24-ի կանոնադրությամբ Հայ Եկեղեցուն տրված երաշխիքները: Վերջինիս 99-րդ հոդվածում որոշակիորեն նախատեսված է, որ նույնիսկ ժամանակի ընթացքում և կյանքի փորձով անհրաժեշտ համարվող հիմնական կանոնները չեն կարող վերանայվել առանց հոգևորականների և ժողովրդի ներկայացուցիչներից բաղկացած հանձնաժողովի ներգրավման: Նոր կարգի երկու հիմնական կետերն են՝ օսմանյան հայերի տարանջատումը ռուսական պարագլխից և եկեղեցական կենտրոնավայրի տեղափոխումը Երուսաղեմ: Առաջին միջոցառումը՝ գոնե թուրքերի տեսանկյունից հասկանալի է, եթե նկատի առնենք այն դերը, որ խաղացին հայերը Կովկասում՝ ռուսների առաջխաղացման ժամանակ: Սակայն երկրորդը ներքուստ չի ընդունվում «Հայ Առաքելական Եկեղեցու» բոլոր համախոհների կողմից՝ որպես իրենց Եկեղեցու միասնության դիտավորյալ պառակտում:

---

4 Անդ, էջ 114:

5 Ըստ Թուրքիայի մշակույթի նախարարության կայքէջի (www.kulturizm.gov.tr.):

6 "The New Encyclopaedia Brittanica", Bd.1, Chicago, 15. Aufl., 1993, 668: "About 600.000 Armenians died of stravation or were killed by Turkish soldiers and police". (Նոր Բրիտանական հանրագիտարանում, հ.1, կարդում ենք. «Մոտ 600 հազար հայեր սովամահ են եղել կամ սպանվել թուրք զինվորների կամ ոստիկանների կողմից»:)

7 Տե՛ս Yves Ternon, Tabu Armenien. Geschichte eines VΦlkermordes, Frankfurt-Berlin 1981, էջ 227 և շրնկ:

Էջմիածնի վանքը որպես նստավայր ընտրվել է ազգային եկեղեցու հիմնադիր եւ Հայոց Եկեղեցու առաջին Կաթողիկոս Ս. Գրիգոր Լուսավորչի կողմից դեռեւս Գ դարում: Այդ ժամանակվանից, չհաշված քաղաքական իրավիճակով պայմանավորված որոշ ընդմիջումը, վանքը մնացել է Հայոց Եկեղեցու առաջնորդի մշտական նստավայրը: Էջմիածնում նստող Ամենայն Հայոց Կաթողիկոսին ենթակա էին չորս այլ եկեղեցական բարձրաստիճան այրեր՝ Աղթամարի ու Սիսի կաթողիկոսները եւ Կոստանդնուպոլսի ու Երուսաղեմի պատրիարքները: Մինչդեռ Աղթամարը երբեք առանձնահատուկ նշանակություն չի ունեցել, Սիսի դերը մեծ է եղել: Երբ սելջուկների կողմից նվաճվեց հին Հայաստանը, եւ Կիլիկիան գաղթած հայերի շնորհիվ վերափոխվեց պետական ու եկեղեցական նոր կառույցի, Սիսը՝ Կիլիկիայի մայրաքաղաքը, մեկուկես դար մնաց Կաթողիկոսի նստավայր, մինչեւ որ 1441 թ. Էջմիածնում հրավիրված ազգային եկեղեցական ժողովը որոշեց վերականգնել տեղի կաթողիկոսությունը: Քանի որ Սիսի այդ ժամանակվա Կաթողիկոսը հրաժարվեց իր նստավայրը Էջմիածին փոխադրել, տեղում նոր Կաթողիկոս ընտրվեց, իսկ Սիսի կաթողիկոսությունը մնաց որպես Կիլիկիայի մասնակի կաթողիկոսություն՝ ունենալով միայն այդ նահանգի գավառների վրա պաշտոնական իշխանություն եւ սահմանափակ արտոնություններ՝ Էջմիածնի Կաթողիկոսի կողմից մե՛րթ ճանաչվելով, մե՛րթ մերժվելով:

Թվում է, որ Երուսաղեմի պատրիարքությունը իր առանձնահատուկ դիրքի համար պարտական է խաչակիրների արշավանքներից հետո Եգիպտոսի նվաճմանը եւ որպես առաջնորդարան միշտ ունեցել է տեղական, միայն Պաղեստինի տարածքի վրա սահմանափակվող նշանակություն: Եկեղեցական առումով այն միշտ ճանաչել է Էջմիածնի գերակայությունը: Կոստանդնուպոլսի պատրիարքությունը հիմնվել է Մեհմեդ Երկրորդ Ֆատիհի կողմից, որը հայ պատրիարքին տվեց նույն իրավունքները, ինչ հույն պատրիարքներին: Անցյալ դարաշրջանից Կոստանդնուպոլսի պատրիարքը ճանաչվում էր նաեւ որպես Էջմիածնի Կաթողիկոսի աթոռակալ՝ աջակցելով եկեղեցական առնչությանը Էջմիածնի Հայոց Եկեղեցու առաջնորդի հետ, որն օծված է առաքելական ավանդույթներով: Նոր կանոնադրության առաջին հոդվածով Սիսի կաթողիկոսությունն ու Կոստանդնուպոլսի պատրիարքությունը փաստորեն վերացվում էին, եւ որպես միակ եկեղեցական ներկայացուցիչ մնում էր Երուսաղեմի պատրիարքը, որը միաժամանակ ստանալով Կաթողիկոսի տիտղոս՝ աթոռակալելու էր Երուսաղեմում: Եկեղեցու ծանրության կենտրոնի տեղափոխումը Երուսաղեմ, որտեղ գտնվում էր ապահովանաբար նվազող, փոքրաքանակ հայկական գաղութ, հստակ բնորոշում է թուրքական կառավարության դիտավորությունը՝ ամբողջովին զրկել նրանց կրոնական կյանքը ազգային նկարագրից: Նոր առաջնորդին հատկացվում էր մի վայր, որտեղ նա կարող էր զբաղվել կրոնական ամեն ինչով, բայց ոչ երբեք ընկնել գայթակղության մեջ՝ կրոնական իր ազդեցությունը չարաշահելով, հետապնդել քաղաքական նպատակներ: Ամբողջ միջոցառումը կարելի էր փոքր-ինչ կոպիտ համեմատությամբ նմանեցնել այն իրավիճակին, երբ գերմանական կառավարությունը, օգտվելով կայսրության՝ Իտալիայի հետ պատերազմական վիճակում լինելու հագամանքից, պապին պաշտոնանկ է անում եւ տեղը, որպես հակաթոռ, նշանակում մի գերմանացի եպիսկոպոսի՝ որպես նստավայր հատկացնելով մի բողոքական քաղաք: Անշուշտ, նոր կաթողիկոս-պատրիարքի զուտ եկեղեցական եւ վարչարարական աշխատանքը դժվարանում է, քանի որ Երուսաղեմը հե-

ռու է իր թեմից եւ պետական վերին իշխանությունից: Նոր կանոնադրության մյուս կետերը, որոնք հայերի շրջանում դժգոհություն պետք է առաջացնեն, այն սահմանումներն են, որոնք վերաբերում են մինչ օրս գործող աշխարհականների մասնակցությանը կաթողիկոս-պատրիարքների ընտրությունների եւ նրանց պաշտոնանկման վերաբերյալ որոշումներին: Ներկա պայմաններում, անշուշտ, բացառվում է, որ հայերը կարողանային արտահայտել իրենց դժգոհությունը: Նրանք բիրտ հալածանքներից այնպես են ահաբեկված, որ յուրաքանչյուր անհատ զգուշանում է իր հայությունը, լինի դա եկեղեցական, թե ազգային առումով, որեւէ կերպ շեշտել: Ես նույնիսկ դիտարկել եմ, որ այստեղի հայերը հնարավորին չափ խուսափում են հոգեւորականների հետ շփվելուց: Ինչ վերաբերում է Կոստանդնուպոլսի նախկին պատրիարք Օրմանյանի դերին, որի մասին Զերդ Բարեձնությունը ժամանակին հարցրել է, ապա վերջինիս Հայոց ազգային ժողովը ուղարկել էր Երուսաղեմ՝ ղեկավարելու նոր ընտրությունը: Սահակ պատրիարքի՝ որպես Սիսի Կաթողիկոսի նշանակում, ամեն դեպքում չէր մտնում նրա հետաքրքրությունների մեջ, քանի որ այն վերջ էր դնում նրա՝ մինչ այժմ ունեցած իշխանությանը: Այնուհանդերձ նա կարողացել է նոր տիրոջ հետ բարեկամական հարաբերություններ ստեղծել: Կաթողիկոս Սահակը, ընհակառակը, տիսուր բնավորության տեր է երեւում, եւ իր ցեղակիցների ու հավատակիցների կրած տառապանքների բերումով, հավանաբար նաեւ դժվարությամբ ենթարկվող անձնավորություն: Անշուշտ, նրան ցավ էին պատճառում հատկապես արեւելյան Հորդանանից շարունակ եկող լուրերը՝ այնտեղ արտաքսված հայերի բռնի իսլամացման մասին: Այդ հավատափոխությունները՝ հավաստի աղբյուրների համաձայն, այսօր էլ շարունակվում են՝ հակառակ թուրքերի ժխտման բոլոր փորձերի: Ըստ երեւույթին Հայկական հարցը եւս դառնալու է հաշտության բանակցությունների թեմա: Շատ ցավալի պիտի համարեի, եթե մենք մեր բարեկամությունը թուրքերի հետ այնքան հեռու տանեինք, որ ի վերջո ներեինք հայերի դեմ գործած նրանց ոճրագործությունները: Թե ինչ կարող ենք անել այդ բոլոր հարցերը լուծելու համար, վեր է իմ դատողությունից, սակայն իմ համեստ կարծիքով՝ Գերմանական կայսրությունը որպես Թուրքիայի քրիստոնյա դաշնակից, առաջին պետությունը կարող է լինել, որը, հենց որ հանգամանքները թույլ տան, հանդես կգա Թուրքիայի հակաքրիստոնյա միտումների դեմ: Սրբազան պատերազմի հռչակումը մեզ համար դարձավ երկսայրի մի զենք»[8]:

Սիսի Կաթողիկոսի նստավայրը սկզբում Հալեպում էր, իսկ ավելի ուշ Անթիլիասում՝ Բեյրութի մոտ: Լիբանանում եւ Սիրիայում բազմաթիվ հայեր վերապրեցին Եղեռնը: Իհարկե թուրքերին չհաջողվեց հուժկու հարված հասցնել Հայոց Եկեղեցու հին կառուցվածքին, որը մինչ օրս կարողացավ հաստատուն մնալ Լիբանանում, Սիրիայում եւ Ռուսահայաստանում ու Ատրպատականում:

1917 թ. փետրվարին Ռուսաստանում տեղի ունեցավ հեղափոխություն, որի հետեւանքով դադարեց ռուսների ճնշումը արեւելյան Թուրքիայի վրա: Միաժամանակ, սակայն, անգլիացիները Դարսից ծոցից հարձակվեցին Թուրքիայի վրա: 1917 թ. մարտի 1-ին Բաղդադը գրավվեց: 1917 թ. հոկտեմբերին ռուսական բանակի հայկական վեց գումարտակ հրաժարվեց գրոհել Դարսկաստանի վրա: Պետերբուրգում Հայկական կոմիտեն որոշեց նախ սպասել, թե ինչ լուծում կստանա հայկական հողերի հարցը: Ցարական բանակում կռվել էին

8 www.armenocide.de (14.11.1916).

150.000 հայ, սակայն նրանք հիասթափվել էին Ռուսաստանից[9]: Հոկտեմբերյան հեղափոխությունից հետո՝ 1917 թ. նոյեմբերի 24-ին, կազմակերպվեց մի նոր կովկասյան կառավարություն՝ ընկերավարների գլխավորությամբ: Բրեստ-Լիտովսկում սկսվեցին հաշտության բանակցությունները նոր բոլշևիկյան Ռուսաստանի եւ Կենտրոնական պետությունների միջեւ: 1917 թ. ապրիլի 20-ին ԱՄՆ-ը Անտանտի կողմից պատերազմի մեջ մտավ, որի շնորհիվ աստիճանաբար ուժեղացավ «Անտանտ կորդիալի» [համաձայնագրերի շարք ստորագրված Անգլիայի ու Ֆրանսիայի միջեւ] գերակշռությունը «Կենտրոնական պետությունների» նկատմամբ: Դեռեւս 1917/18 թթ. ձմռանը Անգլիան լրջորեն մտածում էր Թուրքիայի հետ հաշտության պայմանագիր կնքելու մասին: Կենտրոնական պետությունները, սակայն, նախապես դեռեւս օգտվում էին ռուսական պետության քայքայումից:

Գերմանիան 1918 թ. մարտի 18-ին ստիպեց բոլշեւիկյան Ռուսաստանին ընդունել Բրեստ-Լիտովսկի հաշտության պայմանագիրը, որը թուրքերի համար ստեղծեց բոլորովին նոր իրավիճակ: Արեւելյան երեք մարզերը՝ Կարսը, Արդահանը եւ Բաթումը, հանրաքվեով պետք է որոշեին իրենց ապագան, սակայն շատ չանցած թուրքերը գրավեցին այդ մարզերը: Երբ ռուսական զորքերը կազմալուծվեցին, թուրքական ռազմաճակատում գեներալ Անդրանիկի գլխավորությամբ կազմակերպվեցին հայկական գնդեր, որոնք 20.000 մարդով պաշտպանում էին 375 կմ ձգվող ռազմաճակատը: Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ կնքված 1917 թ. նոյեմբերի 30-ի զինադադարից հետո Թուրքիայի հյուսիսարեւելյան մասը՝ Տրապիզոնից մինչեւ Վանա լիճ, պաշտոնապես դեռեւս ռուսական գրավյալ տարածք էր, սակայն առանց ռազմական պաշտպանության: Մինչեւ 1917 թ. տարեվերջը անգլիացիները գրավել էին Օսմանյան կայսրության այն մարզերը, որոնք նրանք ծրագրում էին պահել նաեւ պատերազմից հետո: 1918 թ. փետրվարի 9-ին ավստրիացի հյուպատոսը զեկուցեց Վիեննա, որ Էնվեր փաշան կարգադրել է թուրքերի մուտքը արեւելյան մարզեր[10]: 1918 թ. փետրվարի 14–ին սկսվեց թուրքերի առաջխաղացումը ռուսական ապառազմականացված Կարսի, Արդահանի եւ Բաթումի մարզեր: Տրապիզոնը գրավվեց հունաց մետրոպոլիտի օգնությամբ. այդ պատճառով այստեղ պակասեցին քրիստոնյաների հալածանքները: Երկու ամսվա ընթացքում թուրքերը հասան 1877 թ. հին սահմանին, որից այնուհետեւ ավելի առաջ անցան: Անդրկովկասցիները (վրացիներ, հայեր եւ ադրբեջանցիներ) Թուրքիայի հետ խաղաղություն էին ուզում կնքել միայն այն պայմանով, որ այդ գործընթացում Գերմանիան եւս ներգրավվեր: 1918 թ. մարտի 13-ին թուրքերը գրավեցին Արդահանը, որտեղ նրանք կոտորեցին 7000 հայ խաղաղ բնակիչ, ապրիլի 14-ին թուրքերը գրավեցին Բաթումը: 1918 թ. մայիսի 15-ին ընկավ նաեւ Ալեքսանդրապոլը: Թուրքական ներխուժման ընթացքում կոտորվեց ընդհանուր առմամբ 8500 հայ: 1918 թ. ապրիլի 22-ին հայկական մի պատվիրակություն ներկայացավ Բեռլին՝ գերմանացիների միջամտությունը հայցելու նպատակով. բայց նրանց ստացածը միայն օգնության անորոշ խոստումներ էին:

Գերմանիան ձգտում էր Անդրկովկասում ստեղծել մի անկախ պետություն: 1918 թ. հունվարին տեղի ունեցան անդրկովկասյան պառլամենտի ընտրությունները: Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը միասնաբար հայտարարեցին Ռուսաստանի կազմից իրենց դուրս

9 Տե՛ս Akaby Nassibian, Britain and the Armenian Question 1915-1923, London-New-York 1985, էջ 96 եւ շրնկ.:
10 Տե՛ս Artem Ohandjanian, Armenien. Der verschwiegene VΦlkermord, Wien-KΦln-Graz 1989, էջ 131:

գալու որոշման մասին: Երբ թուրքերը վերսկսեցին իրենց առաջխաղացումը, այդ համաձայնությունը լուծարվեց: Հայերն առանձնապես շահագրգռված չէին անջատվել Ռուսաստանից: 1918 թ. ապրիլի 22-ին Թիֆլիսում հոչակվեց Անդրկովկասյան Հանրապետություն, որի մեջ մտնում էին Վրաստանը, Հայաստանն ու Ադրբեջանը, եւ նույն օրը թուրքերի հետ զինադադար կնքվեց: Գերմանիան ամենից առաջ հովանավորում էր Վրաստանին, որը շուտով անկախացավ: Այսպիսով, 1918 թ. մայիսի 24-ին Սարդարապատի մոտ թուրքերի դեմ տարած հաղթանակից հետո՝ մայիսի 28-ին, հոչակվեց Հայաստանի Հանրապետությունը եւ Վրաստանի Հանրապետությունը: Սակայն միայն Վրաստանը ճանաչվեց Գերմանիայի կողմից, որը Վրաստանում հիմնել էր զինվորական առաքելություն: Գերմանիայի նպատակն էր Վրաստանը բուֆեր դարձնել Ռուսաստանի ու Թուրքիայի միջեւ: 1918 թ. մայիսի 5-ին Բաթումում սկսվեցին Հայաստանի հաշտության բանակցությունները թուրքերի հետ: Ավելի ուշ Հայաստանը ստիպված եղավ մենակ, թույլ ուժերով եւ մղել թուրքերի հարձակումը 400 կմ ձգվող ռազմաճակատի ամբողջ գծով:

Երբ Հայաստանի ֆինանսների նախարար Ալեքսանդր Խատիսյանը Կոստանդնուպոլսում բանակցություններ էր վարում, նախարար Թալեաթը նրան հաղորդեց Էնվեր փաշայի՝ ազգային խորհրդում արտահայտված այն տեսակետը, թե «հայերը միշտ էլ եղել են եւ մնալու են թուրքերի թշնամիները: Որ նրանք Անատոլիայի սահմանները եւս երբեք հանգիստ չեն թողնելու: Այդ իսկ պատճառով ավելի լավ կլիներ, որ նրանք Կովկասում նույնքան հիմնովին բնաջնջվեին, ինչպես Թուրքիայում: Բացի դրանից, մի փոքրիկ Հայաստան Կովկասում միշտ ձգտելու էր ընդարձակել իր սահմանները: Այդ պատճառով էլ Հայաստանը Թուրքիայի համար մշտապես վտանգ էր նշանակելու: Թալեաթը պատասխանել է նրան, որ այդ առաջարկն անիրագործելի է, քանի որ, ինչ էլ որ լինի, Կովկասում ապրում էր շուրջ երկու միլիոն հայ, եւ նրանց բոլորին անհնարին պիտի լիներ ոչնչացնել: Ավելի նպատակահարմար էր՝ զոհացնել նրանց, քանի որ եթե անգամ կոտորածից հետո 100.000 հայ կենդանի մնար, նրանք Թուրքիային երբեք հանգիստ պիտի չտային: Բացի դրանից, եթե մենք ստեղծեինք մի փոքրիկ Հայաստան, լուծած կլինեինք Հայկական հարցը: Եւ դա մեզ կօգներ դաշնակիցների հետ հաշտության բանակցություններում»[11]: Հայերն ի վերջո ստիպված եղան գերմանացիների խորհրդով 1918 թ. հունիսի 4-ին Բաթումում Թուրքիայի հետ զինադադարի ծանր պայմանագիր կնքել: Թուրքերի գրաված տարածքներից հազարավոր մարդիկ փախչում էին Կովկաս: Նախկին Ռուսահայաստանի արեւմտյան տարածքների զգալի մի մաս անցավ Թուրքիային, որը հնարավորություն ստացավ շարժվելու դեպի Ադրբեջան: Սակայն գերմանական կառավարությունը շուտով տեղեկացավ թուրքերի նոր ոճրագործությունների մասին: Մայիսի 28-ին Գերմանիան Ավստրիայի արտաքին գործերի նախարարությունից պահանջեց, որ թուրքական կառավարությունը բողոք ներկայացնի, քանի որ նորանոր հայ տղամարդիկ էին սպանվում, եւ Կովկասի քրիստոնյաները ենթարկվում էին թուրքերի ու թաթարների գազանություններին: Աններելի էր Բրեստի պայմանագիրը շահագործել որպես «քրիստոնյաներին հետապնդելու արտոնագիր»: Գերմանիան ճանաչում էր Վրաստանի կառավարությունը եւ թուրքերից պահանջում՝ «հայերի նկատմամբ պատշաճ վերաբեր-

11 Անդ, էջ 148-150:

մունք ապահովել Թուրքիայի կողմից գրավված մարզերում»[12]: Երբ Ավստրիայի դեսպանը տվյալ բողոքը նույնությամբ ներկայացրեց Թալեաթին, պարզվեց, որ գերմանական բանակի բարձրագույն հրամանատարությունը որոշ չափով վարում է իր սեփական քաղաքականությունը՝ ամրապնդելով թուրքերի թիկունքը: Հունիսի 1-ին Ավստրիայի դեսպանը հաղորդեց՝ մեծ սխալ էր, որ 1877–ից Ռուսաստանի ենթակայության տակ գտնվող արևելյան մարզերը հանձնվել են «առավել ցածր մի մշակույթի»: Գերմանացի գնդապետ Քրես ֆոն Քրեսենշտայնը 1918 թ. հուլիսին առաջարկեց ռայխսկանցլեր Հերթլինգին՝ «տրամադրության տակ եղած բոլոր միջոցներով եւ հնարավորին չափ արագ գործուն ճնշում կիրառել թուրքական կառավարության վրա, որպեսզի վերջինս անմիջապես զորքը դուրս բերի Հայաստանից»[13]: Քրեսենշտայնը իր՝ «Թուրքերի հետ դեպի Սուեզի ջրանցք» (Բեռլին 1938 թ.) գրքում հաղորդում է նաեւ Երեւանում Կաթողիկոսի հետ մի խոսակցության մասին, որտեղ ծանր մեղադրանքներ են ներկայացվում գերմանացիների դեմ՝ կոտորածներին ունեցած մեղսակցության համար: Ավստրիայի պահվածքն ավելի շուտ վերապահ է եղել, եւ նույնիսկ չի փորձել գերմանացիների մոտ միջամտել հայերի ու հույների օգտին:

Իսկ բրիտանացիներն իսկապե՞ս ցանկանում էին օգնել հայերին, թե՞ ողջունում էին կոտորածները որպես քարոզչության միջոց Թուրքիայի ու Գերմանիայի դեմ, եւ որպեսզի այդ եղանակով ԱՄՆ-ին եւ մյուս չեզոք պետություններին եւս ներքաշեն պատերազմի մեջ: Անգլիան ԺԹ դարում երբեք անմիջական հետաքրքրություն չէր ցուցաբերել Հայաստանի նկատմամբ եւ Թուրքիային հովանավորել էր որպես բուֆեր Ռուսաստանի դեմ: 1915 թ. ռուսներին խոստացել էին Կոստանդնուպոլիսն ու նեղուցները: Անգլիայի կառավարությունը 1918 թ. փորձեց համաձայնության գալ Թուրքիայի հետ: Բրիտանացիներին առաջին հերթին հետաքրքրում էր Միջագետքն ու նավթը. եթե անհրաժեշտ լիներ զիջումներ անել թուրքերին, նրանց ավելի շուտ ցույց էին տալիս հյուսիսային մարզերը, ուրեմն՝ Հայաստանը: Միաժամանակ, հայերի ճակատագրով մտահոգ աշխարհի սրտացավության հետ մեկտեղ աճում էր ճնշումը բրիտանացիների վրա: Այդ իսկ պատճառով նրանք համաձայնության եկան հայերի հողերը բաժանելու Ռուսաստանի ու Ֆրանսիայի միջեւ, քանի որ վերջինս հետաքրքրված էր Կիլիկիայով: Լլոյդ Ջորջը բազմիցս նշել է, որ խոստումը քաղաքագետի համար պարտավորիչ չէ. անգլիացիների հիմնական հետաքրքրությունը ծովածոցն էր եւ դեպի Հնդկաստան ծովային ճանապարհի անվտանգության ապահովումը: Բացի դրանից, նրանք ուզում էին նաեւ հաշվի առնել կայսրության մուսուլման բնակչությանը:

Պատերազմի ընթացքում անգլիական ռազմական խորհուրդը ստիպված եղավ ճշտել, թե ինչպիսին էր լինելու հայերի ճակատագրը պատերազմի ավարտին: 1917 թ. հունիսի վերջին խորհուրդը որոշեց Հայաստանը, միջագետքյան Սիրիան ու Պաղեստինը այլեւս չթողնել Թուրքիայի տիրապետության տակ: 1917 թ. վերջին արտաքին գործերի նախարար Բալֆուրն առաջարկեց, որ ԱՄՆ ստանձնի ինքնավար Հայաստանի հովանավորությունը[14]: Կառավարության մեկ այլ անդամ առաջարկեց, որ ինքնավար Հայաստանը լինի Ռուսաստանի դաշնության անդամ: Իրականում հայերի ապագան չէր հետաքրքրում բրիտանա-

12 Անդ, էջ 151 եւ շրնկ.:
13 Անդ, էջ 220:
14 Nassibian, 1985, էջ 120:

կան կառավարությանը: Ռամզեյ ՄաքԴոնալդը՝ ընդդիմադիր աշխատանքի կուսակցության ղեկավարը, 1918 թ. հուլիսին հարցրեց արտաքին գործերի նախարար Բալֆուրին, թե արդյո՞ք կառավարությունը անսալու էր հայերի դիմադրությանը եւ հոգալու էր, որ Հայաստանը պատերազմից հետո ստանար ինքնորոշման իրավունք[15]: Կառավարությունը փորձեց հանգստացնել ընդդիմությանը: Մի քանի օր անց Բալֆուրը հավաստիացրեց հայ դիվանագետ Պողոս Նուբարին, որ Հայաստանի ազատագրումը դաշնակիցների պատերազմական նպատակների շրջանակում է:

Գերմանիան իր հետաքրքրությունները տեսնում էր գլխավորապես Վրաստանում: Այդ պատճառով հայերը նախ եւ առաջ կողմորոշվել էին դեպի Ավստրիան, որտեղից օգնության ավելի մեծ հույս ունեին: Գերմանիան Հայաստանը հանձնեց Ավստրիայի տրամադրությանը, սակայն Ավստրիայի դեսպանը զգուշացրեց, որ սխալ է Հայաստանը «միապետության առաջին գաղութ» դարձնելու միտքը: 1918 թ. հուլիսի 30-ին հայ դիվանագիտական ներկայացուցիչները Կոստանդնուպոլսում Ավստրիայի դեսպանին իրենց Հանրապետությունը ճանաչելու վերաբերյալ դիմում ներկայացրին: Գերմանացիները զորք ուղարկեցին Վրաստան՝ կասեցնելու թուրքերի առաջխաղացումը: Դաշնակից բանակների բախման ժամանակ թուրքերը մի խումբ գերմանացի զինվորի գերի վերցրին ու սպանեցին: 1918 թ. հուլիսի կեսերին հայկական մի պատվիրակություն ժամանեց Բեռլին՝ խնդրելու գերմանական կառավարությանը, որ գրավի ու պաշտպանի իրենց երկրը: Ավստրիայի արտաքին գործերի նախարարը Բեռլինում դեսպանին հաղորդեց, որ Թիֆլիսում մի կերպ տեղավորվել էին մոտ 30.000 հայ փախստականներ: Մեսրոպ եպիսկոպոսը հավաստիացրեց, որ Երեւանի շրջակայքում եւս 500.000 փախստականի վիճակը հուսահատական էր[16]: Սակայն գերմանական ու ավստրիական կառավարությունները չէին ցանկանում այդ հարցով լրջորեն զբաղվել, քանի որ վախենում էին թուրքերի հետ բարդությունների մեջ ընկնել: Նրանք, սակայն, այպանեցին Թուրքիային, որ նա մի կողմից կորցնում էր իր միջագետքյան եւ սիրիական տիրույթները, իսկ մյուս կողմից Կովկասում ամբողջ կատաղությամբ զբաղվում էր զավթողական քաղաքականությամբ: 1918 թ. օգոստոսի 4-ին Ավստրիայի պատվիրակ Ֆրանկենշտայնը հաղորդեց դեսպան Պալավիչինին երիտասարդ Հանրապետության իրավիճակի մասին, «որ Հայաստանը կարող էր փրկվել կործանումից միայն Կենտրոնական պետությունների շուտափույթ օգնության դեպքում: Ներկայիս Հայաստանը ի վիճակի չէր նույնիսկ տեղի բնակչությանը կերակրել, ուր մնաց երեքից մինչեւ հինգ հարյուր հազար փախստականների: Հայաստանը կենսունակ է միմիայն բրեստյան սահմանները պահպանելու դեպքում, եւ առանց սահմանների այն սրբագրումների, որոնց ձգտում են թուրքերը»[17]:

Գերմանական կառավարությունը չէր ցանկանում Հայաստանում պարտավորություններ ստանձնել, բայց հասկացնում էր, որ դեմ չէր լինի, եթե ավստրացիներն այդ դերը ստանձնեին: Եւ այսպես, ավստրո-հունգարական Միապետության վերջին ամիսներին Արեւելքում ստեղծվեց ավստրիացիների ներդրման հնարավորություն, որը հայերն ընդունեցին սիրով: Հայտնի դարձավ, որ Վիեննայի կառավարությունը նման միջամտությունը

15 Անդ, էջ 114 եւ շրնկ.:
16 Ohandjanian, 1989, էջ 155:
17 Անդ, էջ 160:

խորհրդածության առարկա է դարձրել: Դեսպանության խորհրդական Քարլ ֆոն Թրառութմանսդորֆը 1918 թ. օգոստոսի 12-ին հրահանգ ստացավ պարզելու, թե որոնք են զորք ուղարկելու պայմանները: 1918 թ. օգոստոսի 31-ին Թուրքիայի, Գերմանիայի, Ավստրիայի ու Հայաստանի մասնակցությամբ Երևանում հրավիրված խորհրդակցությունում տեղի ունեցան բանակցություններ հայ փախստականների վերադարձի շուրջ դեպի թուրքերի գրաված մարզերը: Գերմանիան ուզում էր Հայաստանը ճանաչել միայն Խորհրդային Միության հետ համաձայնության գալով, իսկ վերջինս Հայաստանի ինքնուրույնության առնչությամբ ասել էր, որ այն շատ փոքր է անկախության համար: Այդ պատճառով ավստրիական դիվանագիտությունը կառավարությանը խորհուրդ տվեց զգուշանալ: Թալեաթ փաշան՝ Բեռլին մեկնելուց առաջ բացատրեց հայերին, որ Գերմանիան ճանաչում էր միայն Վրաստանը. Նա հայերին առաջարկեց՝ հնարավորության դեպքում ընդարձակել իրենց տարածքը[18]: Բեռլինում Թալեաթը գերմանական կառավարության հետ խոսեց նաև այն մասին, որ Անտանտի հետ հաշտության պայմանագրից առաջ անհրաժեշտ է լուծել Հայկական հարցը: Հայաստանը բանակցում էր Ավստրիայի հետ Խորհրդային Միության կողմից իրենց պետության ճանաչման ուղղությամբ: Իսկ ռուսները հայտարարում էին, որ Հայաստանը կճանաչեին միայն այն դեպքում, եթե Թուրքիան նահանջեր դեպի այն սահմանները, որոնք հաստատված էին Բաթումի հաշտությունից առաջ: 1918 թ. սեպտեմբերի 7-ին Հայաստանի հավատարմատար դ-ր Օհանջանյանը մեկնեց Վիեննա՝ Ավստրիայի հետ բանակցելու մեկ այլ խնդրանքի շուրջ: Նա սեպտեմբերի 17-ին կայսր Քարլին հանձնեց Գեորգ Հինգերորդ Կաթողիկոսի՝ օգոստոսի 3-ի օգնության խնդրագիրը[19]: Այնտեղ ասված էր. «Որպես Արևելքում հնագույն Եկեղեցու առաջնորդ եւ հովիվ մի ժողովրդի, որը վաղեմի ժամանակներից անցնելով բոլոր սարսափների ու անհամար արյունահեղությունների միջով՝ պահպանել է իր քրիստոնեական հավատքն ու իր անսասան հավատարմությունը քրիստոնեության նկատմամբ, դիմում եմ Ձերդ Մեծությանը թախանձագին խնդրանքով՝ օգնության ձեռք մեկնել խորտակվող ժողովրդին եւ Ավստրո-Հունգարիային դաշնակից Թուրքիայի վրա համապատասխան ազդեցություն գործել՝ վերջ դնելու հայ ժողովրդի անսահման տառապանքներին»: Սակայն Ավստրիայի արտաքին գործերի նախարարի խորհրդով՝ անցյալում գրված անթիվ բողոքագրերից միայն մեկն է ուղղվել թուրքական կառավարությանը, քանի որ նման նամակներ նախորդ տասնամյակներում որեւէ ազդեցություն չեն ունեցել:

Մինչ այդ թուրքերը փորձում էին առաջանալ դեպի Բաքու: Ռազմական նախարար Էնվեր փաշան քարոզում էր «թուրանիզմ», այսինքն՝ թուրքական ծագում ունեցող բոլոր ժողովուրդների միավորում մինչեւ Կենտրոնական Ասիա: Այդ իսկ պատճառով Հայաստանը, որպես դեպի Ադրբեջան տանող ճանապարհ, մեծ նշանակություն ուներ նրանց համար: Թուրքերը՝ տասնապատիկ գերազանցությամբ հարձակվեցին Հայաստանի վրա: 1918 թ. սեպտեմբերի 14-ին նրանք հասան Բաքու, որտեղ կոտորեցին 30.000 հայ: Հայ բնակչության կեսը փախավ քաղաքից: Թուրքերը ներխուժեցին նաեւ Դաղստան եւ Հյուսիսային Պարսկաստան: Սա օսմանյան բանակի վերջին հաջողությունն էր: Այդ ջարդերի ժամանակ, ինչպես նաեւ դրանց հաջորդող սովից ու համաճարակներից մահացան մինչեւ 500.000 հայեր:

18 Անդ, էջ 165 եւ շրկն.:
19 Անդ, էջ 169 եւ շրկն.:

Հայ փախստականների թիվն հասավ 850.000-ի, որից մոտ 500.000-ը Երեւանի շրջակայքում: Ի դեպ, մյուս ճակատներում օսմանյան պետությունը քաքայվել էր, իսկ անգլիացիները Եգիպտոսից շարժվում էին դեպի Երուսաղեմ:

Դեռեւս զինադադար կնքելուց առաջ Թուրքիայի կողմից մի քանի անգամ զինադադարի առաջարկ է եղել, անշուշտ, առաջին հերթին ընդդիմադիր քաղաքական գործիչների կողմից: Սուլթանը եւս 1918 թ. հոկտեմբերի 5-ին Բեռնում Անգլիայի դեսպան Հ. Ռումբոլդին ներկայացրեց զինադադարի վերաբերյալ մի հուշագիր, որը սակայն Հայկական հարցին վերաբերող որեւէ առաջարկություն չէր պարունակում: Մյուս առաջարկություններում, ինչպես արքայազն Սաբահ-էդ-Դինինը, խոսքն արեւելյան նահանգների (մինչեւ Տրապիզոն) ինքնավարության մասին էր[20]:

Պատրիարք Գերմանոս Հինգերորդից հետո, որը պաշտոնանկ էր արվել թուրքերի նկատմամբ իր չափից ավելի գիջողականության պատճառով, Կոստանդնուպոլսում արքեպիսկոպոս Դորոթեոսը հույներին ազատեց օսմանյան պետության հանդեպ ունեցած բոլոր պարտականություններից եւ պահանջեց քաղաքը միացնել Հունաստանին: Պաղեստինյան ճակատը կազմալուծվելուց հետո թուրքական կառավարությունը բրիտանացիներին զինադադարի առաջարկ արեց: Թուրքական կողմից բանակցությունների ղեկավար Ռաուֆ բեյը հարցրեց հայկական դիվանագիտական ներկայացուցչության անդամ Ալեքսանդր Խատիսյանին, թե նա կցանկանա՞ր ուղեկցել իրեն, որպեսզի բրիտանացիները տեսնեին, որ թուրքերն ու հայերը հաշտ են: Հոկտեմբերի 30-ին անգլիական մի ռազմանավի վրա Լեմնոս կղզու Մուդրոսի նավահանգստում ադմիրալ Գոֆ Քալթհորպը եւ Ռաուֆ բեյը ստորագրեցին զինադադարի պայմանագիրը: Հայերի իրավունքների երաշխավորության մասին Մուդրոսում խոսք չի եղել: Թուրքերը պետք է խզեին իրենց հարաբերությունները Կենտրոնական պետությունների հետ: Հետագա համաձայնությունները կայացան ի վնաս հայերի. այլեւս ոչ մի խոսք բռնագաղթվածների վերադարձի եւ հայկական վեց նահանգների մասին, ինչպես պահանջել էր Թոյնբին: Նա հիասթափված էր, որովհետեւ այն կարծիքին էր, որ այժմ հայերը դրվել էին անբարենպաստ պայմանների մեջ: Այն դպավորությունն էր ստեղծվել, որ Անգլիան թուրքերին՝ որպես պարգեւ նավթային շրջաններից եւ Պաղեստինից հրաժարվելու դիմաց, Հայաստանում ազատ գործելու իրավունք էր ընձեռնել:

Անգլիացիներին առաջին հերթին հետաքրքրում էր Միջագետքում եւ Պաղեստինում իրենց նվաճումների ապահովումը. մի բան, որի մասին թուրքերի հետ համաձայնություն կար, ինչպես եւ Կիլիկիայի գրավման վերաբերյալ: Ռաուֆ բեյը դեմ չէր, որ անգլիացիները վերահսկեին Դարդանելի հրեպանին. «Եթե հույները հարձակվեին, կարելի էր սպասել, որ Թուրքիայում հեղափոխություն տեղի կունենար»-, շեշտեց նա: Ինչ վերաբերում է Սիս, Զեյթուն, Այնթապ եւ Հաճն քաղաքների հանձնմանը, ապա նա կարողացավ այն կանխել՝ հիմնավորելով, որ այլապես կառավարությունը տապալվելու վտանգի առաջ պիտի կանգներ: Անգլիացիների համար կարեւորն այն էր, որ զինադադարը կնքվել էր առանց ամերիկացիների ու ֆրանսիացիների: Հետեւապես Մուդրոսը նաեւ հաղթանակ էր Ֆրանսիայի նկատմամբ: Սակայն պետք է ընդունել՝ հիմնականում անգլիացիների շնորհիվ էր, որ թուրքերը պարտության մատնվեցին:

20 Nassibian, 1985, էջ 121 եւ շրկն.:

1918 թ. հոկտեմբերին՝ «իթթիհատի» (CUP) վերջին համագումարից հետո, երիտթուրքական Եռյակը ճանաչվելով պարտության պատասխանատու, արձակվեց: Էնվերն ու Թալեաթը 1918 թ. նոյեմբերին գերմանական մի ռազմանավով փախան Գերմանիա: Նրանք 1919 թ. հուլիսին Ստամբուլում, այլ երիտթուրքերի հետ միասին, ի բացակայության դատապարտվեցին մահվան: Վերջին սուլթան Մեհմեդ Վեցերորդը, որը 1918 թ. հուլիսին հաջորդել էր եղբորը, պարտավորված էր ի կատար ածել հաղթանակած Անտանտի հրամանները: Բանակը պետք է զորացրվեր. 1919 թ. մարտի 3-ին սուլթանը «Մարդկության դեմ հանցանք» դատավճռով գործարկեց պատմության մեջ առաջին քրեական դատական ատյանը, որտեղ թուրք դատավորները վճիռ էին կայացնում թուրքական օրենքի համաձայն: 1921 թ. մարտի 15–ին Թալեաթ փաշան Բեռլինում սպանվեց հայ ուսանող Սողոմոն Թեհլերյանի կողմից, որն իր ամբողջ ընտանիքը կորցրել էր կոտորածի ժամանակ: Թեհլերյանը ազատ արձակվեց աղմկահարույց մի դատավարությամբ, քանի որ հիմքում հանցագործը իրական մեղավորը չէր:

1919 թ. սկսվեց վերելքը մի մարդու, որն ավելի ուշ պատմություն մտավ «Աթաթուրք» («թուրքերի հայր») անվամբ: 1915-ին Դարդանելի պաշտպանության ժամանակ հաղթող դուրս եկած գեներալ Մուստաֆա Քեմալ փաշան անցյալում մասնակցել էր երիտթուրքերի խռովությանը, CUP-ի անդամ էր եւ 1917 թ. դեկտեմբերի 12-ին թագաժառանգ Վահդեդինի հետ Բաղ Քրոյցնահում այցելել էր կայսր Վիլհելմ Երկրորդին եւ նրա գեներալներ Հինդենբուրգին ու Լուդենդորֆին: Ռազմական տեսուչ նշանակվելուց հետո Քեմալը Անատոլիայում իր շուրջը համախմբեց ազգամոլական ընդիմությանը: Երբ բրիտանացիները, ռուսները, ֆրանսիացիները, իտալացիները եւ հույները գրավեցին Անատոլիայի մեծ մասը, նա 1919 թ մայիսի 19-ին ապստամբության կոչ արեց զավթիչների դեմ: Իբրեւ ազատահոհ բարեփոխիչ, Քեմալը իսլամը որակեց որպես «անբարոյական մի բեդվինի՝ Ասպծո մասին անհեթեթ ուսմունք» եւ «փտող դիակ, որ թունավորում է մեր կյանքը»՝ դառնալով ազգային նոր շարժման կենտրոնական դեմք: Այսուհանդերձ՝ 1923 թ. ապրիլի 24-ին թուրքական նոր Հանրապետության պառլամենտը հիմնելուց հետո, նա դատապարտեց հայերի բնաջնջումը որպես «ամոթալի արարք», ընդ որում՝ որպես «անցյալի ամոթալի արարք» («maziye aid fazahat»). սակայն նրա իշխանության օրոք պաշտոններ էին վարում նաեւ ցեղասպանության պարագլուխները: Նրա ազգային շարժումը լով ավելի թուլացրեց սուլթանական կառավարության ազդեցությունը: Էրզրումի ու Սվազի համագումարներում (1919 թ.հուլիսի 23-ից մինչեւ օգոստոսի 7-ը եւ 1919 թ. սեպտեմբերի 4-ից մինչեւ 11-ը) Քեմալը Անկարայում ձեւավորեց նոր կառավարություն՝ այնպիսի պառլամենտով, որը նրան ընտրեց նախագահ: Այսպիսով ստեղծվեցին երկու կառավարություն, մեկը՝ Ստամբուլում դաշնակիցների հսկողության տակ, մյուսը՝ ազգայնական, որ համախմբված էր Քեմալ փաշայի շուրջ:

1919 թ. ապրիլին իտալացիներն ափ դուրս եկան Անթալիայում եւ հին Եփեսոսի մոտակայքում, որպեսզի այնտեղ ապահովեն դաշնակիցների խոստացած ազդեցության ոլորտը: 1919 թ. մայիսին սուլթանի կառավարությունը Ստամբուլում կազմակերպեց պատերազմի հանցագործների իր առաջին դատավարությունը, որտեղ խոսքը, օրինակ, Տրապիզոնի կոտորածների մասին էր: Վարչապետ Դամատ Ֆերիդը երիտթուրքերի ոճրագործությունը դատապարտեց 1918 թ. նոյեմբերի 8-ի սենատի նիստում. «Կատարված ոճիրներն աննա-

խընթաց են, ոչ միայն օսմանյան, այլեւ ամբողջ մարդկության պատմության մեջ»: 1919 թ. մայիսին Փարիզի հաշտության վեհաժողովում վարչապետը օսմանյան պատվիրակների ներկայությամբ մեկ ամսամ եւս ընդունեց ոճրագործությունները, ներողություն խնդրեց եւ հատկապես պախարակեց երիտթուրքերի կոմիտեի ղեկավարների ու անդամների կատարված բռնությունները: Ի վերջո նա ոճրագործությունների համար, այնուամենայնիվ, պատասխանատու համարեց երիտթուրքերին: Նա միակ թուրք քաղաքագետն է, որը երբեւէ Առաջին աշխարհամարտի ժամանակ կատարված կոտորածների հետ հստակորեն եւ հրապարակայնորեն կապ չուզեց ունենալ: 1919 թ. սեպտեմբերի 25-ին վարչապետ Քեմենսոն պատասխանեց Դամատ Ֆերիտին՝ Թուրքիան պետք է ընդունի իր ոճրագործությունները. այն ընդունակ չէ ուրիշ ժողովուրդներ կառավարելու[21]:

Բրիտանացիների հսկողության տակ գտնվող սուլթանական կառավարությունը Մուստաֆա Քեմալին նշանակեց հավատարմատար, որպեսզի դադարեցվեն Պոնտոսի հույների ու հայերի նկատմամբ սանձազերծված վայրագությունները եւ զինաթափ արվեն Թոփալ Օսման փաշայի հրոսակախմբերը: Դրանով այծին դարձրին պարտիզպան: Թոփալ Օսմանի առաջին իսկ հանդիպման ժամանակ ապագա «Աթաթուրքի» հետ, վերջինս ասաց. «Թող պոնտացիներն ու հույներն հեռանան: Ժամանակի ընթացքում, հենց ազդանշան ստանանք, որ նրանք գործում են օրենքի դեմ, մենք նրանց բոլորի հաշիվը կմաքրենք»: Խոսակցության վերջում Թոփալ Օսմանն ասաց. «Անհոգ եղեք, իմ փաշա: Ես Պոնտոսի հույներին մի այնպիսի «խունկ» կմատուցեմ, որ նրանք իշամեղուների նման անձավներում կխեղդվեն»[22]: Մայիսին՝ Քեմալի հայտնության օրը, մինչեւ այժմ համարվում է թուրքական ազգային տոն: 1919 թ. սեպտեմբերի 11-ին Քեմալը հայտնեց Կոստանդնուպոլսի դաշնակիցներին, որ տեղի կառավարությունը չի ներկայացնում Թուրքիան եւ որ ինքն այն այլեւս չի ճանաչում: Վերսկսվեցին քրիստոնյաների կոտորածները: 1919 թ. վերջին ընտրություններում ազգայնամոլների հաղթանակից հետո Քեմալն իր շտաբը Սվազից տեղափոխեց Անկարա: Դաշնակիցները հասկացան, որ միայն ռազմական զանգվածային ներդրման միջոցով ի վիճակի պիտի լինեին իրենց մտադրություններն իրականացնել եւ քրիստոնյաներին նոր հալածանքներից ու տեղահանումներից պաշտպանել: Երբ 1920 թ. ապրիլին Քեմալը Անկարայում «Ազգային մեծ ժողովի» նախագահ ընտրվեց, ակներեւ դարձավ, որ սուլթանը եւ Կոստանդնուպոլսի նրա կառավարությունը սոսկ դաշնակիցների անզոր խամաճիկներն էին:

Գերմաներենից թարգմ.
Դորա Սաքայան
Էվելինա Մակարյան

21 Konstantin Fotiadis. Der VΦlkermord an den Griechen des Pontos, in: Tessa Hofmann, Verfolgung, Vertreibung…, 2003, էջ 193:

22 Անդ, էջ 196: